ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

Ա. Ն. ՍՐԱՊՅԱՆ

Երզնկան, որի տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը XIII—XIV դարերում զգալի վերելք էր ապրում, նույն այդ ժամանակաշրջանում տվել է բազմաթիվ դեմքեր, որոնք սնվելով տեղի կրթական օջախներում, հետագայում բաբունու կամ բաբունապետի մեծ հռչակ են վայելել թե՛ Եկեղյաց գավառում, և թե՛ ողջ Հայաստանում։ Դրանցից է և Կիրակոս Երզնկացին։ Նրա անունով պահպանված մատենագրական երկերը բնութագրում են միջնադարի մի նշանավոր գիտնական վարդապետի, որի փիլիսոփայական ըմբռնումները, հասարակական-քաղաքական, բարոյակրթական հայացքներն ու գործունեությունը ուսումնասիրության հարուստ ու արժեքավոր նյութ են տալիս։ Չնայած դրան, Կիրակոս Երզնկացին առ այսօր ըստ ամենայնի չհետազոտված և գրեթե չգնահատված մտածող է։ Բավական է ասել, որ մինչև այժմ չեն պարզված ինչպես նրա անձնավորության, այնպես էլ կյանքի ու ստեղծագործության հետ կապված շատ հարցեր, որոնք կարող էին ճշտել ոչ միայն իր, այլև միջնադարում հայտնի ուրիշ գիտնական վարդապետների կենսագրությանն ու ժառանգությանը վերաբերող խնդիրներ։

Արձակ և չափածո որոշ գործեր, տարբեր դարերում, տարբեր ձեռագրեր վերագրել են կամ ուղղակի Կիրակոս վարդապետի՝ առանց մականվան և կամ մի քանի Կիրակոսի։ Այդ գործերից են XIII դարում նոր միավորներով համալրված «Յայսմաւուրքը», Հովհան Ոսկեբերանի՝ Հովհաննու Ավետարանի մեկնության թարգմանությունը, Եվագր Պոնտացու «Հարիւրաւորքի» լուծմունքը, «Արևելք գերարփին» շարականը և այլն[1]։

Դժվար է ասել, թե ե՞րբ և ինչպե՞ս է առաջացել այդ շփոթը, սակայն տևել է այնքան, որ ստեղծել է կարծիքների մի մեծ թնձուկ։

Այստեղ կփորձենք ձեռագրական նոր նյութերի հիման վրա քննել միայն «Յայսմաւուրքի» համալրման և այդ առիթով կիրակոսների շփոթության հարցը։

Դեռևս Միքայել Չամչյանը, անդրադառնալով եղած իրարամերժ կարծիքներին ու տարակուսանքներին և թվարկելով Կիրակոս Երզնկացու իրեն հայտնի գործերը, չի կարողանում վերջնական եզրակացության հանգել։ Գրիգոր Վկայասեր Մեծի աշակերտ Կիրակոսից ու Գանձակեցուց բացի, նա ընդու-

---

[1] Տե՛ս Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. № 1576, 1328 թ., էջ 364բ. № 1990, 1391 թ., էջ 160բ. № 7463, 1413 թ., էջ 349բ. № 7433, 1467 թ., էջ 428բ. № 8727, XVI դ., էջ 433բ. № 3527, XVI—XVIII դդ., էջ 150ա. № 3291, 1652—1654 թթ., էջ 472ա—474ա, «Գիրք աստուածաբանութեան, որ կոչի դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ճ ա հ կ ե ց ւ ո յ», Կ. Պոլիս, 1735, էջ 634։ «Շարակնոց», Կ. Պոլիս, 1815, էջ 51։ Տ. Զ ա ր բ հ ա ն ա լ յ ա ն, Հայկական հին դպրություն, Վենետիկ, 1897, էջ 754։ Մ. Ա վ գ ե ր յ ա ն, Լրումն լիակատար վարուց և վկայաբանութեանց սրբոց, հատ. ԺԱ, Վենետիկ, 1814, էջ ՀԹ—ՀԶ։

նում է ևս երկու Կիրակոսի գոյություն. մեկը՝ Արևելցի, որ ապրել է XIII—XIV դարերում, մյուսը՝ Երզնկացի՝ XV դարում[2]։

Այլ կերպ են դատում Մ. Ավգերյանը և Կ. Կոստանյանցը։ Նույնացնելով Արևելցի և Երզնկացի Կիրակոսներին, նրանք «Յայսմաւուրքը» վերագրում են Երզնկացուն, համարելով նրան XV դարի հեղինակ։

«Յայսմաւուրք՝ կարծեցեալ Կիրակոսի վարդապետի Արևելցւոյ կամ Գետկացւոյ, ի ԺԵ գարու, զոր չունիմք ի ձեռին, այլ ի տեսողէն տուաւ մեզ տեղեկութիւն...»։

«Այս գործ՝ որպէս ինձ թուի, է աշխատասիրութիւն Սարկաւագ վարդապետի ըստ հիմանն, այլ զվերջին լրումն առեալ ի ձեռն Կիրակոսի վարդապետի Արևելցւոյ, որ ասի Երզնկացի. ապա թէ ոչ է գործ Կիրակոսի վարդապետի աշակերտին Վկայասիրի, ի յետնոց զարդարեալ այլ ևս յաւելուածովք՝ զկնի աւուրց Շնորհալւոյն, զի և նորա վարք կա ի միջի, որպէս և բանք ի բանից նորա. ևս և ռամկօրէն...»[3]։

Ղ. Ալիշանը նույնացնում է ո՛չ թե Երզնկացուն ու Արևելցուն, այլ Գանձակեցուն ու Արևելցուն։ Նրա օրինակին են հետևում Հ. Տաշյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը։ Ալիշանը գրում է. «Միւս նշանաւոր գործ Կիրակոսի, թէև ասոր հեղինակութեան վրա այլ տարակոյս եղած է, այլ ինձ հաւանական երևի, է՛ Յայսմաւուրքն, որ յանուն Արևելցի Կիրակոսի յիշուի։ Այս կոչումս արգելք մի չէ և Գանձակեցի ըլլալուն, զի իր ընկեր Վարդանըն այլ Արևելցի կոչուի»[4]։

Հակառակ կարծիքի է Զարբհանալյանը։ Նա Գանձակեցուն և Արևելցուն համարում է երկու առանձին անձնավորություն. «Կիրակոսի պատմչին ժամանակակից և գրեթե հայրենակից ալ է Կիրակոս Արևելցի վարդապետն, հեղինակ կամ հավաքող Յայսմաւուրք գրոց...»[5]։

Նույն կարծիքին է և Հ. Ոսկյանը[6]։ Իսկ Բ. Սարգիսյանը և Հ. Աճառյանը 1269 թ. համալրած «Յայսմաւուրքը» վերագրում են Երզնկացի Կիրակոսին, նրան համարելով XIII դարի հեղինակ[7]։

Կիրակոս Գանձակեցու և Արևելցու հարցով վերջինը և ամենից հանգամանալի զբաղվել է Կ. Մելիք-Օհանջանյանը և, ինչպես ասացինք, եկել է Ալիշանի այն համոզմանը, թե դրանք նույն անձնավորությունն են, և Գանձակեցին է, որ կոչվել է նաև Արևելցի։ Սրանով նա ևս «Յայսմաւուրքի» խմբագրու-

---

2 Տե՛ս Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 17, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 16, 508։

3 Մ. Ավգերյան, Լրումն լիակատար վարուց, հատ. ԺԱ, էջ Հե, ՀԶ։ Տե՛ս նաև Կ. Կոստանյանց, Մկրտիչ Նաղաշ և յուր տաղերը, Վաղարշապատ, 1898, էջ ԻԱ, ծան. (առանց նշումի ընդգծումներն այստեղ և այսուհետև մերն են—Ա. Մ.)։

4 Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, Պատմիչք հայոց, Վենետիկ, 1901, էջ 107, տե՛ս նաև Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 224, 555 (Վ. Հակոբյանը սխալվում է, կարծելով թե Ալիշանը երկու տարբեր անձնավորություն է համարում Արևելցի և Գանձակեցի Կիրակոսներին. տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հատ. I, Երևան, 1951, էջ 60, ծան. 79)։ Տե՛ս նաև Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 490, 564, 1101։

5 Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրություն, էջ 753 (ընդգծումը հեղինակինն է)։

6 Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական և յուր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 111—112։

7 Տե՛ս «Սրբոյ հօրն Եւազրի Պոնտացւոյ վարք և մատենագրութիւնք, աշխատասիրութեամբ և ծանօթութեամբք ի լոյս ընծայեաց Բ. Սարգիսեան», Վենետիկ, 1907, էջ ՃԾԱ (ծանոթ.)։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Երևան, 1944, էջ 624։

թյունը համձնում է Գանձակեցուն։ Սակայն, ըստ հայագետի, Արևելցի է կոչվել նաև Կիրակոս Երզնկացին, որ ժամանակակից է Գանձակեցուն և մահացել է նույն՝ 1272 թ.։

«Արևելցի» է կոչվել և Կիրակոս Երզնկացին, ԺԳ դարի մատենագիրը, որն իր կյանքը մեծ մասամբ անց է կացրել Կիլիկիայում և այնտեղ էլ մեռել է (1272 թ.), բայց Հակոբ Կարնեցին ասում է, թե գերեզմանը գտնվում է Երզընկայի մի եկեղեցում»[8]։

Հարցի այսպիսի մոտեցումն ինքնըստինքյան թեական է դարձնում եզրակացությունը. եթե Կիրակոս Երզնկացին ևս կոչվել է Արևելցի և ժամանակակից եղել Գանձակեցուն, նույնիսկ մահացել միևնույն՝ 1272 թ., ապա ի՞նչ հիման վրա է իրեն միայն Կիրակոս կամ Կիրակոս Արևելցի կոչող խմբագիրը համարվում Գանձակեցին և ոչ Երզնկացին։ «Յայսմաւուրքները» Գանձակեցուն վերագրելու Կ. Մելիք-Օհանջանյանի բերած փաստարկումները հավանական են, բայց ոչ հաստատական ու վերջնական։ Երզնկացու ապրած ժամանակաշրջանի ճշգրտումով է, որ կարող է վճռվել այդ հարցը։

Կ. Մելիք-Օհանջանյանի ուսումնասիրությունից ավելի վաղ է լույս ընծայվել Հ. Քյուրտյանի աշխատությունը։ Զանդրադառնալով վերոհիշյալ տարակարծություններին ու «Յայսմաւուրքի» հարցին, Քյուրտյանը իր ձեռքի տակ եղած ձեռագրական տեղեկությունների հիման վրա Երզնկացու մահվան թվականը ճշտորեն ընդունել է 1356-ը[9]։

Այս իրարամերժ կարծիքներից հետո շատ դժվար պիտի լիներ լուծել վարկածը և սահմանազատել Կիրակոսներին, եթե տարեթվեր չլինեին ոչ միայն շփոթության պատճառ հանդիսացող «Յայսմաւուրքների» հիշատակարաններում, այլև Երզնկացու վավերական գործերում։

Սկսենք հենց առաջիններից, բերելով մի քանի տարբերակ, ուր հիշվում են թվականներ և ուր հեղինակը ներկայանում է առանց մականվան կամ մականունով։

ա) «...Համարձակեալ ես, նուաստ ծառայ Քրիստոսի Կիրակոս վարդապետ, ի թուականիս Հայոց ՉԲ (=1253) աշխատասիրեալ յաւելի ի նախակարգեալ տաւնս ճառս համառաւտս ԾԺԲ (=112), ի ձեռն Ստեփաննոսի և Վահրամայ վարդապետացն, հաւաքեալ յաստուածաշունչ գրոց, ի պայծառութիւն կաթուղիկէ եկեղեցո[յ] և մեզ տաւնողացս՝ ի բարեխաւսութիւն...»[10]։

Այս նույն «Յայսմաւուրքի» այլ ընդօրինակությունից է օգտվել Ալիշանը։ Բերելով այն, ընդգծում ենք ուշադրության արժանի տարբերությունները.

բ) «Համարձակեալ ես, նուաստ ծառայ ծառայիցն Քրիստոսի Կիրակոս վարդապետ, ի թուականին Հայոց ՉԲ (=1253—4) աշխատեալ յաւելի ի Նախակարգեալ Տօնապատճառ՝ ճառս համառօտս հարիւր և երկոտասան[11], յաւելեալ յաստուածաշունչ գրոց, ի պայծառութիւն կաթողիկէ եկեղեցւոյ և մեզ տօնողացս ի բարէխօսութիւն...։ Զիղձս է զփափագ արտասանութեան այսմ

---

[8] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ Թ։ Հեղինակի այս վարկածին պատասխանել է Հ. Քյուրտյանը, տե՛ս «Բազմավեպ», 1962, հունիս-օգոստոս, էջ 173։

[9] Տե՛ս Հ. Քյուրտյան, Երիզա և Եկեղյաց գավառ, Վենետիկ, 1953, էջ 232։

[10] Մատենադարան, ձեռ. № 7433, 1467 թ., էջ 428բ։

[11] «Ուրիշ օրինակք գրեն հարիր և եօթանասուն»,— գրում է Ալիշանը (Հայապատում, Ա, էջ 107, ծանոթ. 1)։

(երկու) սուրբ վարդապետք լիցին, Վահրամ և Ստեփաննոս, զի գրեսցին ի դիրն կենաց. զոր սկսաք ի վանքն Կողայ»[12]:

Սույն հիշատակարանը տարբերություններով կա նաև № 7463 ձեռագրում, էջ 349բ։ Այստեղ գրված է Տօնապատճառ, առանց «ճառս»-ի։ Վայրը չի ցույց տրված[13]։ «Յայսմաւուրքի» մի ուրիշ համալրված խմբագրության մեջ Կիրակոսն արդեն հիշատակվում է նաև Արևելցի մականունով.

գ) «Յուսովն Աստուծոյ և սիրով սրբոց նորա, նուաստ ոգի Կիրակոս վարդապետ Արևելցի, ի միասին հաւաքեցի զտօն Սրբոցս Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց։ Գրեցի և պատմութիւնս նոցա, որոց ոչ էր եղեալ ի գիրս Յայսմաւուրցն և խառնեցի ընդ նախակարգսն...։ Եւ եղև իրակութիւնս այս ի թուիս ՉԺԸ (=1269), յաշխարհիս կիլիկեցւոց ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմոյ և յառաջին ամի իշխանութեան որդւոյ նորին Լևոնի. ԿՁ (=66) ամի կենաց պանդխտութեան մերոյ, յորում աւարտն եղև ի վառս Աստուծոյ, յաւիտեանս. ամէն։

Եւ ճառք, որ յաւելաք մեք ընդ հինն խառնեալ՝ հարիւր եւ եօթանասուն. անուամբն և շնորհօքն Աստուծոյ. ամէն»[14]։

«Յայսմաւուրքների» մի այլ խմբում այս Արևելցի Կիրակոսը կոչվում է Գետիկցի.

դ) «ԶԿիրակոս վարդապետ Արևելցի՝ ի վանաց Գետկցի (տարբերակ՝ Գետիկցի— Ա. Ս.), զյարմարիչ և զլուսաւորիչ այսմ կտակիս, և զստացող սորա...»[15]։

Հենվելով միայն Ալիշանի բերած հիշատակարանների վրա, Կ. Մելիք-Օհանջանյանը գրում է. «Վկայակոչածս հիշատակարանների մեջ առկա է մի կարծեցյալ հակասություն, այն է՝ մեկի մեջ խոսվում է «Տօնապատճառ» լրացնելու մասին, մյուսի՝ «Յայսմաւուրք»։ Այս հակասությունն էլ հմտորեն վերացնում է բազմիմաց Ղ. Ալիշանը»[16]։

Հիշատակարանի Ալիշանի բերած օրինակում փխ. «Տաւնս ճառս», գրված է «Տաւնապատճառս ճառս»։ Ղունենալով մեր ձեռքի տակ եղած տարբերությունը, Ալիշանն աշխատել է բացատրել այդ կարծեցյալ հակասությունը, գրելով.

«Որչափ այլ Ճառ և Տօնապատճառ ըսուած է, սովորաբար նախնիք այդ Յայսմաւուրաց Սրբոց իւրաքանչիւր վարքերն այլ մէկ մէկ Ճառ կոչեն և համրեն։ Յայսմաւուրաց ձևանալէն և անուանելէն առաջ՝ յարմար էր այդպիսի հաւաքումն կոչել հնագոյն կարգաւորեալ գրոց անուամբ մի, Տօնամակ, Տօնանամակ, Տօնապատնաո, Տօնական և այլն»[17]։

---

12 Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, էջ 107։ «Թերևս Կողուց վանքն, որ յիշուի ի կողմանս Արծկէոյ, ի սկիզբն ԺԵ դարու։ Անծանօթ են այդ երկու վարդապետքն ևս»,— ծանոթագրում է Ալիշանը։ Իսկ աշխատության 472 էջի ծանոթագրության մեջ այս վանքի մասին գրում է. «ի սանքն Կողայ, Մեծ Հայոց Տայք գաւառի մէջ...»։

13 Մատենադարան, ձեռ. № 7463, էջ 349բ։

14 Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 472։ Հիշատակարանը գրեթե նույնությամբ գտնում ենք Զարբհանալյանի մոտ, մինչ Ալիշանը (տե՛ս «Հայկական հին դպրություն», էջ 754)։

15 Մ. Ավգերյան, Լրումն լիակատար վարուց, հատ. Ա, էջ ՀԶ։ Նույնը այլ աղբյուրներից տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, էջ 107, Հ. Տաշեան, Ցուցակ, էջ 564, 567։

16 Կիրակոս Գանձակեցի, էջ ԺԱ։

17 Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, էջ 107—108 (ընդգծումները հեղինակինն են)։

Սակայն խնդիրն ավելի է պարզվում, երբ նկատի ենք ունենում նույն հիշատակարանի մեր տարբերակը։ Կարծեցյալ հակասությունը միայն ընդ-օրինակության հետ կապված գրչության սխալ կարող է լինել. «տօնս ճառս» «տօնապատճառ» կարդալով, գրիչը երկու անգամ կրկնել է «ճառ» բառը և ստացվել է «տօնապատճառս ճառս»։

Կ. Մելիք-Օհանջանյանը գտնում է նաև, թե շփոթ կա «Յայսմաւուրքների» հիշատակարաններում, այնտեղ, ուր ասում է «ի թուականին Հայոց ՉԲ (= 1253) աշխատեալ (մեր օրինակում՝ աշխատասիրեալ— Ա. Ս.) յաւելի» և այնտեղ, ուր ասում է, թե «ի թուիս ՉԺԸ (=1269)... աւարտն եղև»։ Նա գրում է. «Արդյո՞ք ճիշտ է ընդօրինակել և հրապարակել բաղմավաստակ Ղ. Ալիշանը՝ «ի թուականին ՉԲ». եթե ճիշտ է, այդ դեպքում իմաստաղրկվում է առաջին հիշատակարանի ՉԺԸ (գուցե ՉԺէ) թվականը։ Մի աշխատություն չի կարող մեկ ավարտվել ՉԲ թվին, մեկ՝ ՉԺԸ։ Մենք տրամադիր ենք կարծելու, որ երկրորդ հիշատակարանում պետք է կարդալ՝ «ի թուականէն ՉԲ», որով հիշատակարանները միմյանց կլրացնեն և կիմաստավորվեն, այն է՝ «Յայսմաւուրքի» նյութերը Կիրակոսը ձեռնարկել է լրացնել ՉԲ (1253) թվականին և ավարտել է ՉԺԸ (ՉԺէ) թ., այսինքն մոտ 15—16 տարի ընդմիջումներով շարունակել է նյութեր հավաքել...»[18]։

Սակայն պետք է նկատել, նախ, որ ո՛չ միայն Ալիշանին հայտնի, այլև մեր բերած օրինակներում ճշտորեն գրված է «ի թուականին ՉԲ» և ոչ «ի թուականէն»։ Ապա, այս հիշատակարանում ոչ մի խոսք չկա ավարտելու մասին, այլ միայն աշխատասիրելու և լրացնելու՝ «աշխատասիրեալ յաւելի ի նախակարգեալ տաւնս...»։ Եվ վերջապես, Կիրակոսը 1253 թ. արդեն 112 նոր ճառ էր ավելացրել «Յայսմաւուրքներում» եղածի վրա, և ոչ նոր ձեռնարկել, ինչպես կարծում է Կ. Մելիք-Օհանջանյանը։ Շարունակելով աշխատանքը, հետագայում Կիրակոսն ինքը ևս ասում է. «Գրեցի եւ պատմութիւնս նոցա, որոց ո՛չ էր եղեալ ի գիրս Յայսմաւուրցն և խառնեցի ընդ նախակարգսն», որով նրա ավելացրած ճառերի քանակը 1269 թ., այսինքն 16 տարի հետո, հասնում է 170-ի[19]։

Հակասություն կարող է թվալ Ալիշանի բերած հիշատակարանում նշվող «Կողայ» վանքը ևս։ Ալիշանը, ինչպես նշեցինք, մի տեղ ենթադրում է, թե դա կարող է լինել «Կողուց վանքն՝ որ յիշուի ի կողմանս Արծկէոյ. ի սկիզբն ԺԵ դարու»[20], մի ուրիշ տեղ գրում է, թե «վանքն Կողայ. Մեծ Հայոց Տայք գաւառի մէջ»[21]։

Թվում է, թե այստեղ ևս պետք է փնտրել գրչի սխալ։ Մի դեպքում կարող էր «Կոշայ» բառի շ-ն ղ կարդացվել և Կոշայ վանքի փոխարեն ստացվեր Կողայ վանք, մյուս դեպքում գրիչը, թերևս իմանալով միայն Կողայ վանքը, կարող էր սխալ համարել նախօրինակը և այն «ուղղել» Կողայ։

Հայտնի է, որ Գետիկի վանքը, Մխ. Գոշի անունով, կոչվել է նաև Գոշայ վանք, որ կարող էր գրվել Կոշայ վանք ևս (հայերենում կ-ն ու գ-ն, այլև ղ-ն հաճախ են փոխարինում միմյանց)։ Այս դեպքում Կողայ վանքը նույնանում

18 Կիրակոս Գանձակեցի, էջ ԻԶ (ընդգծումը հեղինակինն է)։
19 Տե՛ս նաև Մատենադարան, ձեռ. № 7463, էջ 349բ։
20 Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, էջ 107 (ծանոթ.)։
21 Նույն տեղում, Ի, էջ 472 (ծանոթ.)։

է Գետիկի վանքի հետ, որը և հիշվում է «Յայսմաւուրքների» մի ամբողջ խմբի մեջ[22]։

Եթե ի մի բերելու լինենք «Յայսմաւուրքի» հեղինակ Կիրակոսի մասին մեր ունեցած բոլոր տեղեկությունները, ապա կստացվի, որ նա կոչվել է Արևելցի, եղել է Գետիկի վանքում, գործել է XIII դարում։ «Յայսմաւուրքի» առաջին խմբագրությունը կատարել է 1253 թ., լրացնելով այն 112 ճառով։ Հետագայում ևս զբաղվել է դրանով և 1269 թ. կազմել է մի այլ օրինակ, ավելացնելով այնպիսի պատմություններ, որ մինչ այդ չեն եղել «Յայսմաւուրքներում»։ Հնում եղածի հետ իր ավելացրած ճառերի թիվը հասցրել է 170-ի։ Այդ տարիներին գտնվել է Կիլիկիայում և եղել մոտավորապես 66 տարեկան։

Այս ամենը գրեթե նույնությամբ համընկնում են Կիրակոս Գանձակեցու մասին մեր ունեցած տեղեկություններին։

Մանրակրկիտ ուսումնասիրելով Գանձակեցու «Պատմութիւնը», Կ. Մելիք-Օհանջանյանը նկատում է, թե ոչ մի ձեռագրում չի հիշվում նրա Գանձակեցի մականունը, մինչդեռ ձեռագրերից 25-ում գրված է. «...ի մեծահռչակ ուխտն Գետկայ», կամ Կիրակոսի «ընտրեալ վարդապետի ի մեծահռչակ ուխտն Գետկայ», կամ «Պատմութիւն Կիրակոս վարդապետի Գետակեցւոյ» և այլն[23]։

Այդպես էլ նա հիշվում է Նոր Գետիկի վիմագիր արձանագրություններում։ Դրանցից մեկը «թվագրված է ՉԹ (1260)։ Դա նշանակում է, որ այդ թվականին Կիրակոսն ապրելիս է եղել Նոր Գետիկում։ Հիմք ընդունելով այն, որ Հովհաննես Արմանեցին աղատագրում է «ի խնդրո Կիրակոս վարդապետին» «զԳետկա ժողովուրդս ի հարկէ, որ տաին յաթոռն», կարծում են, որ «Կիրակոսը եղել է վանքի հեղինակավոր անձնավորություններից։ Թերևս նա էլ Մխիթարի նման ղեկավարում էր վանքի դպրոցի կյանքը»։ Եթե անգամ այս ենթադրությունը լրիվ համապատասխան չլինի իրական-պատմական եղելությանը, այնուամենայնիվ ակներև է մի բան, որ նա երկար տարիներ ապրել է Նոր Գետիկում և մեծ հարգանք վայելել վանականների միջավայրում»[24]։

«Որ Նոր Գետիկը Կիրակոսի մշտական կայանն է եղել, դրա լավագույն ապացույցը տալիս է մեզ հենց նրա Պատմութիւնը, որի մեջ բավականաչափ մանրամասն նկարագրված է այդ մենաստանի շինարարությունը և ներկայացված է վանահայրերի հաջորդականությունը»[25]։

Գետիկի վանքի մասին խոսելիս Գանձակեցին իր «Պատմութեան» մեջ գրում է. «Եւ բաղում եղբարք ժողովեցան վասն հռչականուն տեղւոյն, և բազմաց եղև տեղի սննդեան և ուսման. որ և մեք իսկ սնեալ և ուսեալ եղաք ի նոյն վանս»[26]։ Կամ մի ուրիշ տեղ. «...և եկաք ի տեղի սննդեան մերոյ ի վանքըն, որ կոչի Գետիկ. և նա աւարեալ էր ի նոցանէ, և այրեալ շինուածքն՝ որ ի նմա, և անդ դադարեցաք» և այլն[27]։

---

22 Այս հարցին Կ. Մելիք-Օհանջանյանը չի անդրադառնում։

23 Տե՛ս մանրամասն Կիրակոս Գանձակեցի, էջ Ը։ Գ. Սրվանձտյան, Բորոս աղբար. հատ. Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 448։

24 Կիրակոս Գանձակեցի, էջ ԻԴ։ Հմմտ. Հ. Ջանփոլադյան, Մխիթար Դոշ և Նոր Գետիկի վանքը, տե՛ս «Աշխատություններ Հայաստանի պետ. պատմական թանգարանի», հատ. Ա, 1948, Երևան, էջ 96, 160—161 և 143։

25 Կիրակոս Գանձակեցի, էջ ԻԴ։

26 Նույն տեղում, էջ 222։

27 Նույն տեղում, էջ 252։

Կասկածից դուրս է, որ Գանձակեցին ապրել ու դաստիարակվել է Գետիկում, ուրեմն և կարող է կոչվել Գետիկցի. մի բան, որ առհասարակ ընդունված ու տարածված սովորույթ է եղել միջնադարում։

Այնուհետև Կ. Մելիք-Օհանջանյանը հանգամանորեն պատճառաբանում է Կիրակոսի նաև Արևելցի հորջորջումը, կապելով այն Գանձակի աշխարհագրական-տերիտորիալ ու քաղաքական-վարչական վիճակի հետ, որպես «աշխարհն Արևելից», ինչպես և Կիրակոսի քաղաքական, եկեղեցական-վարդապետական ու գրական-պատմագրական գործունեության հետ՝ համադրելով և ուրիշ հեղինակների, որոնք նույնպես, լինելով «յաշխարհէն Գանձակայ» կոչվել են նաև Արևելցի, ինչպես, օրինակ, Հովհաննես Սարկավագը, Վարդան Մեծը, Մխիթար Գոշը և ուրիշներ։ Վերջինս ունեցել է նույն այն երեք մականունները, ինչ Կիրակոսը՝ Գանձակեցի, Գետիկցի և Արևելցի[28]։ Այս կոչումները, ինչպես ճիշտ նկատվել է, կապվում են հեղինակների ծննդյան, ուսման, դաստիարակության, գործունեության կամ բնակության վայրի հետ, նայած թե ո՞րն է առավել կարևոր դեր ունեցել նրանց կյանքում։

«Պատմութեան» հեղինակ Կիրակոս Գանձակեցին մի տեղ գրում է. «Եւ յորժամ եղև այս գծագրութիւնն, որ յայսմ վայրի, ի ՈՂ (=1241) թուականի Հայոց, ի թագաւորութեանն Հայոց, որ ի կողմանս Կիլիկեցւոց, Հեթմոյ բարեպաշտի... և ի բռնակալութեան հանուրցս թաթարին, և ի ժամանակի կենաց մերոց ամս քառասուն պակաս կամ աւելի»[29]։

Գրեթե նույնն է ասում և «Յայսմաւուրքի» խմբագրողը. «Եւ եղև իրակութիւնս այս ի թուին ՉԺԸ (=1269), յաշխարհիս Կիլիկեցւոց, ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմոյ, և յառաջին ամի իշխանութեան որդւոյ նորին Լևոնի, ի վաթսուն և վեց ամի կենաց պանդխտութեան մերոյ»[30]։

Այս երկու տարեթվերն էլ լիովին համապատասխանում են միևնույն Կիրակոսին. 1241 թ. մոտ 40 տարեկան եղողը, 1269 (կամ 1268) թ. կլիներ շուրջ 66—67 տարեկան, այսինքն ծնված 1201—1203-ին, ինչպես ընդունված է, մոտավոր ճշտությամբ, Գանձակեցու ծննդյան թվականը[31]։

Բոլորովին այլ են Կիրակոս Երզնկացու մասին մեզ հասած վկայությունները։ Նրա կյանքի ու գործունեության վերաբերյալ հայտնի բոլոր տեղեկությունները ոչնչով չեն կապվում Արևելցի մականվան հետ։ Իր գործերից ոչ մեկում նա չի կոչվում Արևելցի։ Դրանց և՛ վերնագրերում, և՛ հիշատակարաններում, գրված իր իսկ ձեռքով, նա միայն Երզնկացի է. «Արդիւնաբան և հոգիաներկ վարդապետին Կիրակոսի Եղնկեցոյ արարեալ մեկնութիւն Հարիւրաւորացն Եւագրեայ...»[32]։ «Ի բանն, որ ասէ, Զայն տեառն ի վերայ ջուրց... Կիրակոս վարդապետի Երզնկեցոյ արարեալ»[33], «Կիրակոս վարդապետի Եղընկացոյ, խրատք...»[34], «Խրատ վասն խոստովանութեան, զոր արարեալ է Կիրակոս վարդապետի Եղնկացոյ»[35], «Եւ ես ասեմ. այս գիր ձեռին իմոյ՝ ի

28 Նույն տեղում, էջ է—Ը, ԺԱ։
29 Նույն տեղում, էջ 278։
30 Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրություն, էջ 753—754։
31 Տե՛ս նաև Կիրակոս Գանձակեցի, էջ ԺԳ։
32 Մատենադարան, ձեռ. № 1980, 1391 թ., էջ 41ա։
33 Մատենադարան, ձեռ. № 2187, 1346 թ., էջ 105ա։
34 Մատենադարան, ձեռ. № 2268, 1683—1689 թթ., էջ 4բ։
35 Մատենադարան, ձեռ. № 2335, 1476 թ., էջ 302բ։

նուաստ Կիրակոս վարդապետին է՝ Եղընկացւոյ՝ մայրաքաղաքիս Հայոց լուսաւորիչ գաւառիս...» և այլն[36]։

Երզնկացու Գետիկում գտնվելու մասին չկա որևէ հեռավոր հիշատակություն անգամ։

Կիրակոս Գանձակեցու Կիլիկիայում լինելու մասին կարելի է անել հավանական ենթադրություններ, նկատի ունենալով նրա «Պատմութիւնը»[37]։ Երզնկացու մասին առայժմ ոչ մի հիմք չունենք նման կարծիք հայտնելու։

Սակայն ավելի խոսուն և անհերքելի վկայություններ են թվականները։

«Կիրակոսի Եղնկեցոյ արարեալ մեկնութիւն Հարիւրաւորացն Եւագրեայ» խրատա-փիլիսոփայական գործի վերջում հեղինակն ունի հետևյալ հիշատակագրությունը. «Եւ ես նուաստս և յետինս ի վարժապետաց Կիրակոս, ի յութհարիւր և յերեք թուականիս Հայոց (=1354), արարի զվերլուծութիւն Հարիւրաւորացս սուրբ հօրն Եւագրեայ, տկար գոլով հոգւով և մարմնով»[38]։

Ահա և 1356 թ. մարտի 18-ին Երզնկայում գրված այն տողերը, որ նրան արդեն մահացած են հիշում.

«Յիշեցէք և զերջանիկ և զերիցս երանեալ րաբունապետն մեր զԿիրակոս վարդապետն, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս... և զհարազատ նորին՝ զմիւս վարդապետն Յովհաննէս, որ այժմ աստուծով զմեզ հայրաբար խնամէ...»[39]։

Սրանով լուծվում են այն տարակարծությունները, որոնք Կիրակոս Երզընկացուն համարում են կամ XIII դարի հեղինակ՝ մահացած 1272 թ. (երբ նա դեռ նոր միայն կարող էր ծնված լինել), կամ՝ XV դարի։ Վերանում են նաև «Յայսմաւուրքի» XIII դարի համալրումները նրան վերագրելու վարկածները։

Ինչպես տեսանք «Յայսմաւուրքի» հիշատակարանները գրված են տարբեր տարեթվերի՝ 1253 և 1269։ Առաջինի մեջ հեղինակն իրեն կոչում է միայն Կիրակոս, իսկ երկրորդի մեջ՝ Կիրակոս Արևելցի։ Եթե նույնիսկ ընդունելու էլ լինենք, որ դրանք տարբեր հեղինակներ են և նրանցից մեկն Արևելցին է, մյուսը՝ Երզնկացին, ապա առաջանում է մի նոր տարակույս. քանի՞ տարի է ապրել Կիրակոս Երզնկացին։ Այն հիշատակարանը, ուր հեղինակն իրեն միայն Կիրակոս է կոչում, գրված է 1253 թ.։ Այդպիսի մի գործ կատարելու համար, էլ չենք ասում հեղինակավոր ու պատասխանատու, որ է «Յայսմաւուրքի» մեջ մտցնել և կանոնական դարձնել նոր ճառեր՝ նոր սրբերի մասին, Երզնկացի Կիրակոսը պետք է լիներ առնվազն քսան տարեկանից ավելի, թեկուզ 22—23 տարեկան։ Նշանակում է նա պետք է ծնված լիներ 1230 թ. ոչ ուշ։ Սակայն, ինչպես տեսանք, նա կենդանի է եղել մինչև 1356 թ.։

Թվում է, թե բերված փաստերը բավական են համոզվելու, որ «Յայսմաւուրքը» լրացնող Կիրակոսը եղել է մի այլ անձնավորություն, որն իրեն կոչել է Արևելցի։ Հետագա դարերում են միայն նրանք շփոթվել կամ նույնացվել։

---

36 Մատենադարան, ձեռ. № 8727, ԺԶ դ., էջ 312ա։

37 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ Իե։

38 Մատենադարան, ձեռ. № 1980, էջ 160բ։

39 Հ. Քյուրտյան, Երիզա և Նկեղյաց գավառ, էջ 232 (այս Հովհաննես-ը Կիրակոսի եղբորորդին է—Ա. Ս.)։

Այս ամենից ելնելով, կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը.

Ա. «Յայսմաւուրքի» հեղինակը Կիրակոս Երզնկացին չէ։

Բ. Կիրակոս Երզնկացին XIII—XIV դարերի հեղինակ է, ծնված մոտ 1270-ական թթ. և մահացած՝ 1356-ին։ Նրա գործերի մանրամասն քննությունը սահմանազատում է Արևելցի՝ «Յայսմաւուրքների» խմբագրության հեղինակ ու Երզնկացի Կիրակոսներին դրելթե մի ամբողջ հարյուրամյակով և վերացնում Գանձակեցի ու Երզնկացի Կիրակոսների շփոթը։

ФИЛОЛОГИЧЕСКИЕ УТОЧНЕНИЯ

А. Н. СРАПЯН

(Резюме)

«Айсмавурк» (Четьи-Минеи), пополненный в XIII в. новыми речами, в различные века и в разных рукописях приписывался либо просто вардапету Киракосу без прозвища, либо нескольким Киракосам с определенными прозвищами. Анализируя существующие в арменоведении взаимоисключающие мнения, на основании новых рукописных материалов по-новому рассматривается вопрос об авторе редакции «Айсмавурка» и делается заключение, что таковым является Киракос Гандзакеци (Аревелци). Одновременно уточняется время жизни Киракоса Ерзынкаци (1275—1356 гг.), которого отделяет от времени пополнения «Айсмавурка» (1253—1269 гг.) целое столетие.